ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մայիս ամսվա վերջի դրությամբ)













2022թ. մայիսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 307 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.8%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 6.2%-ով, իսկ 2020 թվականի մայիսի 31-ի նկատմամբ աճելով 15.4%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 79.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.1-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 5.8%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ աճելով 16.8%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 227.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.3%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ նվազելով 12.5%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ նվազելով 5.4%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 580.5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.8%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 8.7%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 24.2%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 75.4 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 9.1%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 25.8%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 505.1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.4%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 1.8%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 709.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.8%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 16.8%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ աճելով 1.8%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 370.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.7%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 27.6%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 64.8%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 227.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.3%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ նվազելով 12.5%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ նվազելով 5.4%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 27.8 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.6%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 3.6%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ աճելով 9.6%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 3 մլրդ 47,5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.2%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 47.8%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 77.4%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 505.1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.4%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 1.8%-ով:

ԱԺԲԳ













ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 372.1 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.4%-ով, 2021թ. մայիսի 31-ի նկատմամբ՝ 4.9%-ով, իսկ 2020թ. մայիսի 31-ի նկատմամբ աճելով 3.5%-ով:

2022թ. մայիսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.37%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.99 տոկոսային կետով, 2021թ. մայիսի 31-ի ցուցանիշից՝ 0.94 տոկոսային կետով, 2020թ. մայիսի 31-ի ցուցանիշից՝ 1.65 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.29%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.96 տոկոսային կետով, 2021թ. մայիսի 31-ի համեմատությամբ՝ 0.86 տոկոսային կետով, իսկ 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ՝ 1.56 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.34, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.03 տոկոսային կետով, 2021թ. մայիսի 31-ի ցուցանիշից՝ 0.08 տոկոսային կետով, իսկ 2020թ. մայիսի 31-ի ցուցանիշից՝ 0.09 տոկոսային կետով:

2022թ. հունվար-մայիսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 95.29 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 14.23 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 19.29 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 60.46 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7.37 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.75 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 24.83 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.87 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.51 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2022թ. հունվար-մայիսի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 91.81 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 325.23 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 114.08 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 89.17 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 20.53 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 0.46 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 2.64 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 345.76 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 113.62 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-մայիսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 31.04 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.4%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 28.6%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 84.03 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 7.6%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5%-ով,

3) ստացվել են 97.69 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 189,9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 226.2%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 115.07 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 7.5%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 7.3%-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %




2022թ. մայիսի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 319 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մայիսի 31-ի և 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 110.1, 297.8 և 553.1 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3679 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 82 օրով, 2021թ. մայիսի 31-ի համեմատությամբ պակաս է 500 օրով, իսկ 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ պակաս է 489 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել է 5.17%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.49 տոկոսային կետով, 2021թ. մայիսի 31-ի համեմատությամբ ավել է 0.9 տոկոսային կետով, իսկ 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ ավել է 0.61 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. մայիսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.33%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.13 տոկոսային կետով, 2021թ. մայիսի 31-ի համեմատությամբ մեծ է է 0.23 տոկոսային կետով, իսկ 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ մեծ է 0.24 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 10,24%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մայիսի 31-ի և 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.13, 3.98 և 4.18 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 88.42%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մայիսի 31-ի և 2020թ. մայիսի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1.27, 4.22 և 4.44 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. մայիս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել է 8.23 տարի: Այս ցուցանիշը 2021թ. մայիսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.61 տարով, իսկ 2020թ. մայիսի 31-ի ցուցանիշից՝ 0.77 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել է 10.14%, որը 2021թ. մայիսի 31-ի և 2020թ. մայիսի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 2.12 և 3.25 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. մայիսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.04%, լողացող տոկոսադրույքով՝ 16.96%: Ընդ որում, 2022թ. մայիսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. մայիսի 31-ի ցուցանիշից ավել է 0.78 տոկոսային կետով, իսկ 2020թ. մայիսի 31-ի ցուցանիշից ավել է 2.24 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. մայիսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 66.42%, ներքին պարտք՝ 33.58%: Ընդ որում, 2022թ. մայիսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. մայիսի 31-ի և 2020թ. մայիսի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 8.78 և 9.78 տոկոսային կետերով: